



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ (CQS)

Հետաքրքրվածության արտահայտման հրավեր

12 հունվարի 2018 թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»

Առաջադրանքի անվանումը՝ ք. Երևանի Մուրացանի անվ. թիվ 18 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծի մշակում և հեղինակային հսկողության իրականացում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ APD-06

Վերջնաժամկետ՝ 2018թ. հունվարի 26-ը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստացել է վարկ Ասիական զարգացման Բանկից (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը («Պատվիրատու») նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Ծրագրով նախատեսված դպրոցների նախագծման և հեղինակային հսկողության իրականացման համար կհատկացվեն ֆինանսական միջոցներ տեղական խորհրդատուներին՝ ստորև բերվող աշխատանքների կատարման նպատակով:

Խորհրդատուն պետք է՝

- ա) մշակի վերը նշված դպրոցի մանրամասն աշխատանքային նախագծերը,
- բ) համաձայնեցնի իր կողմից մշակված նախագծերը համապատասխան կազմակերպությունների հետ,
- գ) իրականացնի հեղինակային հսկողություն իր կողմից նախագծված կառույցների շինարարության ընթացքում:

Խորհրդատուի հետ կկնքվի երկու առանձին պայմանագիր՝

1. Միանվագ՝ նախագծային աշխատանքների համար,
2. Ժամանակի վրա հիմնված՝ հեղինակային հսկողության համար:

Կնքված պայմանագրի սահմաններում կազմակերպությանը կհանձնարարվի **ք.Երևանի Մուրացանի անվ. թիվ 18 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծի մշակում և հեղինակային հսկողության իրականացում:**

Խորհրդատուների կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝

Վերջին 10 տարիների ընթացքում.

- Կազմակերպության ընդհանուր փորձառությունը /գործունեության հիմնական ոլորտների համառոտ նկարագրությունը և կատարված աշխատանքների ցանկը/,
- Նմանատիպ կառույցների ուժեղացման նախագծային աշխատանքների իրականացման փորձը,
- Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում նախագծային աշխատանքների իրականացման փորձը (ՀՏԶՀ-ի կողմից իրականացվող ծրագրերի նախագծային աշխատանքների իրականացման փորձը նախընտրելի է):

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, կազմակերպության ընդհանուր փորձառությունը և նախկինում կատարած նմանատիպ աշխատանքների ցանկը), որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Ասիական Զարգացման Բանկի «Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում» (մարտ, 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է) սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) ընթացակարգին համաձայն:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏՁՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով կամ Էլ-փոստով) ոչ ուշ քան **2018թ. հունվարի 26-ը, ժամը 17:00:**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,

ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏՁՀ գրասենյակ,

Գնումների բաժին, 406 սենյակ,

Հեռախոսը՝ (374 60) 50-15-60,

Էլ-փոստը՝ procurement@atdf.am: